Արմենուհի Չիֆլիկյան[1]

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՁԻ ՊԱՏՎԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԲԱՎԻ ՆՍԵՄԱՑՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԾԱԳՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Գիտատեխնիկական առաջընթացը, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեխնիկայի աննախադեպ զարգացումը հանդիսանում են ժամանակակից աշխարհի անքակտելի բաղկացուցիչը: Մարդկության մեծագույն նվաճումներից մեկը, անտարակույս, համաշխարհային ցանցի ստեղծումն էր, որն իսկական հեղափոխություն էր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում:

Սկզբնապես հետապնդելով պատերազմի դեպքում արդյունավետ պաշտպանության նպատակ և ստեղծված լինելով որպես տեղեկատվության ապահով փոխանցման համակարգ՝ ներկայումս այն ընդլայնել է իր գործունեության ինչպես ոլորտները, այնպես էլ նպատակները: Ավելի քան երեք միլիարդ մարդ ամբողջ աշխարհում[2], որը կազմում է մեր մոլորակի բնակչության գրեթե 45 տոկոսը, ներկայումս օգտագործում է համացանցը գործարարական գործունեության իրականացման, կրթական, հաղորդակցության, զանգվածային լրատվության իրականացման և այլ բազմապիսի նպատակներով: Բնականաբար ոլորտների նման բազմազանությունը, ինչպես նաև համացանցից օգտվողների այս ծավալի մեծաքանակությունը հղի է անձի իրավունքների խախտման իրական սպառնալիքներով:

Ուստի այսպիսի իրավիճակում առավել քան արդիական է դառնում համացանցի տարածքում որևէ գործունեություն իրականացնելիս անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունը: Գրեթե անսահմանափակ ազատությունը, որով այսօր ողողված է համացանցը, հաճախ հանգեցնում է անձի ի-

---

[1] ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյան:

[2] Տե՛ս http://www.internetlivestats.com/internet-users/:

բավունքների խախտման, քանի որ անձի կյանքի բաղկացուցիչ մասը կազմող վիրտուալ տարածությունում տեղի ունեցող իրադարձություններն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում կիբեռտարածությունից դուրս:

Ազատության նման պայմաններում և հատկապես խոսքի ազատությունը չարաշահելու արդյունքում առավել խոցելի դառնում է անձի հեղինակության իրավունքը: Այդ իսկ պատճառով տվյալ աշխատությունում ցանկանում ենք բացահայտել համացանցի միջոցով անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի նսեմացման կապակցությամբ առաջացող հարաբերությունների առանձնահատկությունները և այն պաշտպանության մեխանիզմները, որոնք կարող են գործադրվել նման ոտնձգությունների դեպքում:

Այսպիսով՝ տվյալ աշխատության շրջանակներում ցանկանում ենք քննարկել և ի հայտ բերել՝

1. Արդյո՞ք անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի նսեմացումը կարող է պատասխանատվության հանգեցնել համացանցի միջոցով կատարվելու ցանկացած դեպքում,

2. Ինչպիսի՞ առանձնահատուկ ձևով կարող է դրսևորվել համացանցի միջոցով անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի նսեմացումը,

3. Ինչպե՞ս կարող է տուժողը պաշտպանել իր իրավունքները համացանցի միջոցով իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը նսեմացվելու դեպքում:

Համացանցը տեղեկատվական հասարակության հենասյուներից մեկն է: Գրականության մեջ բազմիցս ընդգծվել է, որ մարդու իրավունքների շարքին է դասվում նաև համացանց ազատ մուտքի իրավունքը, և խոսքի ազատությունը 21-րդ դարում կարող է պաշտպանված լինել միայն այն դեպքում, երբ այն իրացվում է նաև կիբեռտարածությունում, որը, ինչպես նշում է Ռ. Յորգենսենը, համակարգչային համակարգի կողմից ստեղծված վիրտուալ տարածությունն է:[1] Իսկ 2012 թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհուրդն ընդունեց բանաձև, որի համաձայն այն բոլոր իրավունքները, որոնք

[1] Տե՛ս Jorgensen R. F., Framing the net, Edward Elgar Publishing Inc., 2013 թ., էջ 49:

մարդիկ ունեն ինտերնետային տարածությունից դուրս, պետք է պաշտպանվեն նաև ինտերնետային տարածությունում:

Վերջին շրջանում անընդհատ ընդգծվում է համացանցի՝ որպես զանգվածային լրատվության նոր տեսակի՝ թվային զանգվածային լրատվության դերը:

Այսպես, Սլեվինն ընդգծում է համացանցի՝ որպես զանգվածային լրատվամիջոցի, հետևյալ առանձնահատկությունները՝

1. Գլոբալ հասանելիությունը,
2. Փոխգործակցությունը երկխոսության ձևով,
3. Անսահմանափակ տարածքը,
4. Տեղեկատվության մատակարարների մեծաքանակությունը:[1]

Գլոբալ հասանելիության հատկանիշը ցույց է տալիս, որ համացանցի միջոցով տարածված տեղեկատվության մատչելիությունը կրում է ավելի զանգվածային բնույթ, քան այլ տեսակների լրատվամիջոցներով տեղեկատվության տարածումը: Երկխոսության ձևով փոխգործակցության էությունը այն է, որ ի տարբերություն տպագիր մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության, համացանցում ապահովվում է երկխոսության համար տարածք: Անսահմանափակ տարածքը դրսևորվում է դրա անվերահսկելի ծավալների մեջ: Ինչ վերաբերում է տեղեկատվության մատակարարների մեծաքանակության չափանիշին, ապա պետք է նշել, որ ի տարբերություն զանգվածային լրատվության այլ միջոցների, որոնց դեպքում մեծ զանգված կազմում են տեղեկատվություն ստացողները, համացանցն աչքի է ընկնում տեղեկատվություն արտադրողների և մատակարարողների արտակարգ մեծ թվաքանակով:

Համացանցի՝ որպես զանգվածային լրատվամիջոցի, առանձանահատկությունների մեկ այլ դասակարգման համաձայն դրա հիմնական հատկանիշներն են արագությունը, հասանելիությունը, ինտերակտիվությունը և անանունությունը:[2]

Համացանցի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այն հնարավորություն է տալիս անձանց գրանցել անձնական ինֆորմացիա՝ տարբեր նպատակներից ելնելով: Ինտերնետային գրանցումների արխիվացման պրակիտիկան առաջ է բերում այն հարցը, որ դառ-

---

[1] Տե՛ս Slevin J., The Internet and Society, Malden MA: Polity, 2000 թ., էջ 183:

[2] Տե՛ս Gurak L., Internet studies in the 21st century. Web.Studies. 2009 թ., էջ 24:

նում է դժվար տարբերակել անձի կողմից հանրության համար հրապարակված տեքստը նրա այնպիսի գրանցումներից, որոնք հրապարակելիս անձը դրանց երկարատև պահպանման միտում չի ունեցել:[1]

Համացանցի տարածքում ավանդական «տեղեկատվության մատակարարի» ու «լսարանի» սահմանները դառնում են ավելի հեղհեղուկ: Այսինքն՝ համացանցում՝ որպես զանգվածային լրատվության դաշտ, տեղի է ունեցել տեղափոխություն պրոֆեսիոնալ լրատվությունից դեպի խառը լրատվական կառույցներ, երբ ավելի ու ավելի շատ անձինք հանդես են գալիս որպես տեղեկատվության հեռարձակողներ: Գոյություն ունեն նույնիսկ հատուկ կայքեր, ինչպիսին են, օրինակ՝ Հարավկորեական «Լրագրող քաղաքացի» կայքը, որն իրենից ներկայացնում է ինտերնետային ամսագիր՝ կազմված հազարավոր քաղաքացիների ամենօրյա գրառումներից: Մեկ այլ օրինակ է «Global voices» միջազգային հանրույթը, որը միավորում է քաղաքացի հեռարձակողներ ամբողջ աշխարհից:

Համացանցը ստեղծում է մեկ այլ իրականություն, որը թեև տարբերվում է ռեալ կյանքի իրականությունից, բայց այստեղ ևս անձինք ունեն իրենց «կյանքը», որի շրջանակներում իրականացնում են որոշակի գործունեություն, որի ընթացքում էլ կարող են խախտել միմյանց պատվի, արժանապատվության և գործարար համբավի իրավունքները:

Հասկանալու համար, թե ինչպես կարող են համացանցային իրականությունում իրականացվել զրպարտությունն ու վիրավորանքը՝ որպես պատվի, արժանապատվության և գործարար համբավի նսեմացման արդյունքում պատասխանատվության հանգեցնող արարքներ, անհրաժեշտ է վեր հանել համացանցի բնույթին վերաբերող որոշ հատկանիշներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն զրպարտությունն անձի վերաբերյալ այնպիսի

[1] Տե՛ս Jorgensen R. F., նշված աշխատությունը, էջ 32:

փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Փաստորեն ինչպես բխում է վերոհիշյալ օրենսդրական բնորոշումներից, և՛ վիրավորանքի, և՛ զրպարտության համար պարտադիր պայման է դրանց կատարման հրապարակային եղանակը: Ուստի, եթե անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի նսեմացումը կատարվի կոնֆիդենցիալ պայմաններում, այն չի համարվի օրենսդրական իմաստով զրպարտություն կամ վիրավորանք:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է բացահայտել, թե համացանցում ինչպե՞ս կարող է դրսևորվել հրապարակայնությունը, արդյո՞ք անձի կատարած ցանկացած «քայլ» կարող է համարվել հրապարակային, և արդյո՞ք հնարավոր է ունենալ «ոչ հրապարակային»՝ մասնավոր տարածքներ բոլորի համար համընդհանուր համացանցում:

Պարզվում է, որ համացանցում ևս կարող են առկա լինել այսպես կոչված մասնավոր տարածքներ: Իսկ ինչպե՞ս պետք է մնացած բոլոր տարածքներից տարանջատել այն մասնավոր տարածքը, որի սահմաններում անձի արարքը զրպարտություն կամ վիրավորանք համարվել չի կարող:

Ընդհանրապես տարբեր ոլորտներում մասնավորության համար վճռորոշ չափանիշ է համարվում մուտքի նկատմամբ վերոհսկողությունը: Ինչպես նշել է Ռոսլերը, «ինչ-որ բան անձի համար մասնավոր է այն ժամանակ, երբ նա ունի դրա մուտքը վերահսկելու իրավունք՝ կլինի դա նրա տունը, որոշումները, թե գործելու եղանակները»:[1] Անձի ազատության առումով կենտրոնական տեղ է գրավում անձի ինքնավարությունը, որի վրա էլ կառուցված է մասնավորության գաղափարը:

Կիբեռտարածությունում անձանց միջև հաղորդակցումը տեղի է ունենում լիովին այլ կերպ, քան ռեալ կյանքում: Այսպես, գոյություն ունեն ինտերնետային հատուկ տարածքներ, որոնք, ըստ մասնավոր-հանրային կոնտինուումում իրենց զբաղեցրած տեղի, դասակարգ-

[1] Տե՛ս Rossler B., The value of privacy. Goodbye privacy- Ars Electronica, 2007թ., էջ 26-29:

վում են հետևյալ տեսակների՝ հանրային, կիսահանրային, կիսամասնավոր և մասնավոր: Հանրային տարածքը բաց է և հասանելի յուրաքանչյուրի համար, օրինակ՝ էլեկտրոնային կայքերի մեծ մասը: Կիսահանրային տարածքները սկզբունքորեն հասանելի են բոլորի համար, սակայն պահանջում են գրանցում կամ անդամություն, օրինակ՝ սոցիալական կայքերը: Հաջորդը կիսամասնավոր տարածքն է, որը տալիս է սահմանափակ մուտքի հնարավորություն, քանի որ բացի անդամությունից կամ գրանցումից պահանջում է նաև այն կազմակերպությանը պատկանելություն, որի կողմից այն ստեղծվել է, օրինակ՝ ինտրանետը: Եվ վերջին՝ մասնավոր տարածքները հասանելի են միայն դրանք ստեղծողի համար:

Այսինքն՝ ստացվում է, որ եթե անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի նսեմացումը տեղ է գտել անձի մասնավոր համացանցային տարածքում, ապա այն վիրավորանք կամ զրպարտություն համարվել չի կարող: Խնդրահարույց է կիսամասնավոր և կիսահանրային տարածքների շրջանակներում անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի նսեմացումը՝ որպես վիրավորանք և զրպարտություն որակելու հարցը: Այս առումով մասնագիտական գրականության մեջ կարծիքները բախվում են այն հարցի առնչությամբ, թե արդյո՞ք կիսահանրային և կիսամասնավոր տարածքում գրառված տեղեկատվությունը կարող է համարվել հրապարակային: Եթե ելնենք ավանդական լրատվության տեսանկյունից, ապա ցանկացած տեղեկատվություն, որը հասանելի է համացանցում, պետք է համարվի հանրային, և այն պետք է գնահատվի որպես հրապարակված տեքստ: Ի տարբերություն այս մոտեցման՝ Սվենինգսոնի կարծիքով «հրապարակայնության» հատկանիշը պետք է մեկնաբանվի՝ համացանցի կողմից ընձեռնված հաղորդակցության նոր ձևերի համատեքստում և դրանցից ելնելով, և այս կապակցությամբ կիսահանրային ու կիսամասնավոր տարածքներում օգտատերերն ունեն իրենց գրառումները՝ որպես մասնավոր համարելու ակնկալիք:[1] Իսկ ինչպես նշում է Շիրկին, նման գրառ-

[1] Տե՛ս Sveningsson M. E., Question three: How do various notions of privacy influence decisions in qualitative internet research? Internet inquiry: Concversations about Method. Eds A. N. Markham and N. K. Baym. Thousand Oaks, CA: Sage Publications, 2009 թ., էջ 83:

ման՝ հանրության որոշակի շրջանակի համար հասանելի լինելն ինքնին չի նշանակում նաև դրա հրապարակված լինելը:[1]

Մեր կարծիքով վերոնշյալ խնդրի առնչությամբ կիսահանրային կամ կիսամասնավոր տարածքում տեղեկատվությունը չպետք է համարվի հրապարակված՝ այդ տեղեկատվության օգտագործման հետ կապված հարցերով, սակայն պետք է համարվի հրապարակային, եթե կապված է այլ անձանց պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը նսեմացնելու հետ, քանի որ նույնիսկ եթե անձը մյուսների հետ հաղորդակցվում է կիսահանրային կամ կիսամասնավոր տարածքում, ապա դա նրան չի կարող ազատել ուրիշի հեղինակությանը հասցված վնասի հատուցման պարտականությունից:

Հաջորդ հարցը, որին ցանկանում ենք անդրադառնալ, համացանցի միջոցով անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի նսեմացման առանձնահատուկ ձևերն են:

Այսպես, քանի որ համացանցը տալիս է անձանց իրենց ինքնությունը թաքցնելու լայն հնարավորություններ, անձինք հաճախ այսպես կոչված «յուրացնում են այլ անձանց ինքնությունը»: Խոսքը ոչ թե պարզապես սեփական ով լինելը թաքցնելու մասին է, այլ միաժամանակ նաև այլ անձի ինքնությունը իրեն վերագրելու մասին, ինչը լուրջ վտանգ է ստեղծում ոչ միայն երրորդ անձանց իրավունքների խախտման, այլև հենց այն անձի իրավունքների խախտման համար, ում ինքնությունը յուրացվել է:

Համացանցի միջոցով ինքնության յուրացումը իրավախախտի համար բավականին հեշտ գործընթաց է. բավարար է միայն մուտքագրել տվյալ անձի տվյալները, իսկ նրա պատկերի ձեռքբերումը յուրացումն ավելի ռեալիստական է դարձնում: Նշված իրավախախտումը օրենսդրորեն ամրագրված է տարբեր երկրներում, օրինակ՝ ԱՄՆ որոշ նահանգներում՝ Նյու-Յորք, Կալիֆորնիա, Տեխաս և այլն: Անհրաժեշտ է ընդգծել, որ պատասխանատվության հանգեցնում է ոչ թե ինքնին ուրիշի ինքնությունը յուրացնելու փաստը, այլ ինքնության յուրացումն անձին վնաս պատճառելու միտումով:

Թեև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն անձի ինքնության յուրացումը հայտնի չէ որպես առանձին իրավախախտում, սակայն եթե այն զուգորդվում է տուժողի վերաբերյալ արա-

[1] Տե՛ս Jorgensen R. F., նշված աշխատությունը, 2013 թ., էջ 119:

տավորող և իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների տարածմամբ, ապա օրենսդրորեն չկա որևէ արգելք իրավախախտին զրպարտություն կատարելու համար պատասխանատվության ենթարկելու համար:

Այսպես, ՌԴ դատական պրակտիկային արդեն իսկ հայտնի է դեպք, երբ անձը՝ վերցնելով մեկ այլ անձի ինքնությունը, վերջինիս անունից անպարկեշտ բնույթի առաջարկներ էր արել տարբեր տղամարդկանց, այդպիսի արարքի համար նրան մեղադրանք էր առաջադրվել անձին զրպարտելու համար (Ռուսաստանի Դաշնությունում զրպարտությունն ու վիրավորանքը քրեորեն պատժելի արարքներ են):[1] ՌԴ Կորոլյովի քաղաքային դատարանը, 2008 թվականին, քննելով վերոհիշյալ գործը, համարեց, որ տուժողի պատվին և արժանապատվությանը նման արարքով վնաս է հասցվել:

Անդրադառնալով հաջորդ հարցադրմանը՝ այսինքն այն խնդրին, թե ինչպիսի պաշտպանության միջոցների կարող է դիմել անձը համացանցի միջոցով իրեն զրպարտելու կամ վիրավորելու դեպքերում, պետք է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցներն անձին լիովին հնարավորություն չեն տալիս արդյունավետ իրացնելու վիրավորանքի կամ զրպարտության դեպքում պաշտպանության իր իրավունքը:

Այսպես՝ առաջնորդվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով, տուժողը չի կարող համացանցի միջոցով զրպարտվելու կամ վիրավորվելու դեպքում պահանջել տվյալ էլեկտրոնային կայքի իրավատիրոջից հերքելու արատավորող տեղեկությունները կամ հրապարակելու իր պատասխանը կամ էլեկտրոնային տվյալ կայքում հրապարակելու դատարանի վճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն, քանի որ նման պաշտպանության միջոցները նախատեսված են միայն զանգվածային լրատվության միջոցներով զրպարտելու և վիրավորելու դեպքերի համար: Իսկ «համացանց» և «զանգվածային լրատվության միջոց» հասկացությունները չեն կարող նույնացվել. համացանցն իր բովանդակությամբ

[1] Տե՛ս http://mosoblproc.ru/news/n649:

ավելի լայն է, և ներառելով նաև զանգվածային լրատվության ասպարեզը՝ չի սպառում իր բովանդակությունը միայն դրանով:

Ինչպես ակնհայտ է համացանցի ընդհանուր նկարագրից և բնույթից, համացանցի միջոցով անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի դեմ ոտնձգություններն իրենց վտանգավորությամբ չեն կարող զիջել զանգվածային լրատվամիջոցներով զրպարտելու և վիրավորելու դեպքերին:

Այս առնչությամբ անհրաժեշտ է հիշատակել Դելֆին ընդդեմ Էստոնիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2015 թվականի վճիռը, որով դատարանը գտավ, որ այն դեպքում, երբ էլեկտրոնային կայքով ակնհայտորեն նսեմացվում է անձի պատիվն ու արժանապատվությունը, էլեկտրոնային կայքի պատասխանատու անձը պարտավոր է իր կողմից իրականացվող՝ էլեկտրոնային կայքի տիրույթում գրառված մեկնաբանությունների նկատմամբ հսկողության շրջանակներում ապահովել այլ անձանց պատվի և արժանապատվության պահպանությունը և հեռացնել ստորացուցիչ մեկնաբանությունները:

Ընդ որում՝ այն հանգամանքը, թե ինչպես է իրականացվում նման հսկողությունը, ինչպես նշել է Եվրոպական դատարանը, որևէ նշանակություն չի կարող ունենալ էլեկտրոնային կայքի իրավատիրոջ պատասխանատվությունը նվազեցնելու հետ կապված: Կայքի իրավատերն ազատ է իր կայքի տիրույթում կատարվող մեկնաբանությունների պատշաճ վերահսկողության համար միջոցներ ընտրելու հարցում. դա կարող է լինել վերահսկողություն մինչև անձի մեկնաբանության հրապարակումը, կամ դրանից հետո: Հսկողությունը կարող է իրականացվել նաև հետագա ձևով, այսինքն՝ գրառումները պետք է ստուգվեն արդեն իսկ կայքում հրապարակվելուց հետո կարճ ժամկետում:

Դատարանը նշել է, որ թեև համացանցում մեկնաբանություններ գրող անձինք պատասխանատվություն են կրում իրենց մեկնաբանությունների համար, բայց այդ հանգամանքը, այնուամենայնիվ, չի նշանակում կայքի իրավատիրոջ պատասխանատվության բացառում: Վիրավորական մեկնաբանության հրապարակումից օրեր անց անձի պատվի պաշտպանության համար ձեռնարկվող միջոցները կարող են այլևս արդյունավետ չլինել, քանի որ այդ ժամանակահատվածում արդեն լայնորեն տարածված կլինեն հազարավոր օգ-

տատերերի շրջաններում՝ մանավանդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույնիսկ իմանալով տվյալ համակարգչի IP հասցեն և նաև այդ համակարգչի գտնվելու վայրը, գործնականում բավական դժվար է պարզելու կոնկրետ այն անձին, ով հանդիսացել է տվյալ վիրավորական գրառման հեղինակը:[1]

Կարծում ենք՝ էլեկտրոնային կայքից հեռացումը՝ որպես պաշտպանության միջոց, կարող է բավականին արդյունավետ լինել:

Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ զրպարտության և վիրավորանքի դեպքում «էլեկտրոնային կայքից հեռացումը»՝ որպես պաշտպանության միջոց, նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ: Եվ ընդհանրապես էլեկտրոնային կայքից հեռացման հնարավորությունը միանշանակ չի ընկալվում զանգվածային լրատվամիջոցների որոշ ներկայացուցիչների կողմից: Այսպես, վերջիններիս մի մասը պնդում է, որ եթե տուժողին հնարավորություն տրվի պահանջելու իր մասին զրպարտչական բնույթի տեղեկությունների կամ իրեն հասցված վիրավորական արտահայտությունների՝ էլէկտրոնային կայքից հեռացում, ապա անհավասար դիրքերում կհայտնվեն համացանցն ու զրպարտություն կամ վիրավորանք կատարելու այլ միջոցները, օրինակ՝ տպագիր մամուլը: Ըստ նշված մասնագետների էլեկտրոնային կայքից հեռացումը հավասարազոր է տպագիր թերթը ոչնչացնելուն:[2]

Այս կապակցությամբ անհրաշեշտ է հիշատակել Արդարադատության եվրոպական դատարանի կողմից քննված Մարիո Կոստեխան ընդդեմ «Google Spain»-ի գործը: Ճիշտ է, նշված դատարանի կայացրած որոշումները պարտադիր չեն Հայաստանի Հանրապետության համար, սակայն դրա դիրքորոշումը արժեքավոր է խնդրի էությունը լուսաբանելու տեսակետից: Այսպիսով, դատարանը քննության արդյունքում եկավ այն եզրահանգման, որ «Google» ընկերությունը պարտավոր է իր որոնողական համակարգից հեռացնել այն հղումները, որոնք պարունակում են այնպիսի տեղեկատվություն անձի մասին, որոնք այլևս վերաբերելի չեն վերջինիս:[3]

---

[1] Տե՛ս Delfi ASE vs Estonia, Decision of European Court of Human Rights, 16/06/2015:

[2] Տե՛ս http://www.aravot.am/2015/11/21/631371/:

[3] Տե՛ս Google Spain v AEPD and Mario Costeja Gonzalez, Decision by the Court of Justice of the European Union, 13/05/2014:

Մեր տեսակետն էլէկտրոնային կայքից հեռացման առումով հանգում է նրան, որ եթե Արդարադատության եվրոպական դատարանը արդարացված է համարել այն տեղեկությունների վերաբերյալ հղումների հեռացումը, որոնք երբեմն եղել են իրականությանը համապատասխանող, ապա առավել ևս զրպարտչական բնույթի տեղեկությունները, որոնք չեն համապատասխանել իրականությանը, կարող են հեռացվել կայքից: Բացի այդ համացանցը, լինելով արագ և հասանելի լայն զանգվածների համար, հնարավորություն է տալիս մի քանի րոպեների ընթացքում հասարակությանը հասանելի դարձնել ցանկացած տեղեկատվություն՝ դրանով իսկ ընդլայնելով այդ տեղեկատվության տարածվածությունը: Եթե համացանցը համեմատելու լինենք տպագիր մամուլի հետ, ապա այն երբեք չհնացող, միշտ թարմացվող լրատվության աղբյուր է, որը հրապարակվում է անընդհատ ռեժիմով, և որի բոլոր՝ անգամ տարիների վաղեմություն ունեցող էջերը գրեթե միշտ հասանելի են այնպես, ինչպես դրա ամենավերջին հրապարակումները:

Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ էլեկտրոնային կայքից վիրավորական արտահայտության կամ զրպարտչական բնույթի տեղեկատվության հեռացումը՝ որպես պաշտպանության միջոցի նախատեսում, ոչ միայն արդարացված է, այլև անհրաժեշտ է՝ էլեկտրոնային կայքի միջոցով և տպագիր ձևով կատարված վիրավորանքը և զրպարտությունը հավասար ձևերով պաշտպանելու համար՝ հաշվի առնելով, որ կայքից զրպարտչական տեղեկությունների կամ վիրավորական արտահայտությունների հեռացումը միտված է հետագայում դրանց տարածման կանխմանը:

Անհրաժեշտ է նշել նաև այն հանգամանքի մասին, որ հաճախ համացանցում անձինք վիրավորական և զրպարտչական բնույթի տեղեկությունները հրապարակում են՝ թաքցնելով իրենց իրական անհատականությունը մտացածին անձի ինքնության ներքո: Նշված արարքի հիմքում ընկած է այն հոգեբանական ասպեկտը, որը բացատրում է, թե ինչու է անհատը դիմում նման հնարքի: Այսպես, «դերերի տեսության» համաձայն անհատն իրենում միավորում է մի շարք ինքնություններ և իր անձի ամբողջականությունն արտահայտվում է նրանում, թե ինչպես է նա իրեն նույնացնում այդ ինքնությունների հետ: Ընդ որում, ինչպես նշում է Հոֆմանը, անձը ոչ թե պարզա-

պես իրականացնում է այդ «դերերը», այլև կարողանում է այդ ընթացքում ինքնադիտարկել և ինքնավերլուծել դրանք:[1]

Այսինքն, եթե անձը ստեղծում է իր համար կեղծ ինքնություն, նա ցանկանում է իր ինքնության «այլ կողմի», ուրիշների տեսադաշտից դուրս կողմի համար արտահայտման հնարավորություն տալ ինքն իրեն:

Համացանցում անանունությունը՝ որպես առանձին սկզբունք, ամրագրված է «Համացանցում հաղորդակցության ազատության մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003 թվականի մայիսի 28-ի հռչակագրում: Վերջինիս համաձայն տեղեկատվության և գաղափարների ազատ արտահայտումը կատարելագործելու նպատակով անդամ-պետությունները պետք է հարգեն համացանցի օգտատերերի կամքը՝ չբացահայտելու իրենց ինքնությունը:

Բայց միևնույն ժամանակ անանունությունը թույլ է տալիս մարդկանց խուսափելու իրենց խոսքերի համար հաշվետու լինելուց:[2] Եվ երբ անձը համացանցի միջոցով իր համար ստեղծում է կեղծ ինքնություն, դա նրան հնարավորություն է տալիս ակտիվորեն խախտել այլ անձանց իրավունքները, արտահայտել նրանց հասցեին այնպիսի մտքեր, որոնք իրական կյանքում բացեիաբաց կխուսափեր արտահայտելուց:

Ըստ էության այդպիսի կեղծ ինքնությունը սիմուլյացիայի ձև է կամ սիմուլյակր: Սիմուլյակրը բացակայող իրականության պատկերն է՝ զրկված բնօրինակից, հիպերռեալիստիկ օբյեկտ, որի ետնում չկա որևէ իրականություն:[3] Ինչպես նշում է հայտնի փիլիսոփա Ժան Բոդրիյարը, սիմուլյակրն իրականության փոխարինումն է իրականության նշաններով:[4]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ պատշաճ ձևով կարգավորված չեն ինչպես այն հարաբերությունները, որոնք կապված են էլեկտրոնային կայքի տիրույթում ակն-

---

[1] Տե՛ս Светлана Арутюняан, <Идентичность: от теории к практике>, Ереван, 2010թ., էջ 11:

[2] Տե՛ս Daniel J. Solove, <The Future of Reputation: gossip, rumor and privacy on the Internet>, Yale University Press, 2007թ., էջ 139:

[3] Տե՛ս http://dic.academic.ru/dic.nsf/enc_culture/1112/Симулякр:

[4] Տե՛ս Жан Бодрийяр, <Симулякры и симуляция>, Editions galilee, Paris, 1981թ., էջ 18:

հայտ վիրավորանք հրապարակելու դեպքերի հետ, այնպես էլ կեղծ ինքնությամբ հանդես եկող անձանց պատասխանատվության հարցերը:

Ուստի գտնում ենք, որ նպատակահարմար կլիներ օրենսդրորեն ամրագրել հետևյալ գաղափարները՝

1. Եթե այլ անձանց կողմից էլեկտրոնային կայքի տիրույթում կատարվել է ակնհայտ վիրավորանք, ապա էլեկտրոնային կայքի համար պատասխանատու անձը պարտավոր է 24 ժամվա ընթացքում դրանք հեռացնել էլեկտրոնային կայքի տիրույթից՝ անկախ այն հանգամանքից, դիմել է տուժողը կայքի իրավատիրոջը նման պահանջով, թե ոչ:

2. Եթե էլեկտրոնային կայքի տիրույթում այլ անձանց կողմից՝ առանց իրենց ինքնությունը թաքցնելու, կատարվել է վիրավորանք կամ զրպարտություն, էլեկտրոնային կայքի իրավատերը պարտավոր է հեռացնել այն դատարանի համապատասխան վճռի հիման վրա:

3. Եթե էլեկտրոնային կայքի տիրույթում այլ անձանց կողմից՝ իրենց ինքնությունը թաքցնելով, կատարվել է վիրավորանք կամ զրպարտություն, ապա ինչպես բխում է ՀՀ օրենսդրության առկա կարգավորումներից, էլեկտրոնային կայքի իրավատերը պարտավոր է հեռացնել այն դատարանի համապատասխան վճռի հիման վրա: Այստեղ լիովին կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածը, որի համաձայն, եթե արատավորող տեղեկություններ տարածած անձին պարզելն անհնար է, այդ տեղեկությունները պետք է համարվեն իրականությանը չհամապատասխանող: Խնդիրն այն է, որ նման դատական գործընթացը կարող է երկարատև լինել, ինչի արդյունքում անձի իրավունքների խախտումը կարող է դառնալ տևական, ուստի ավելի նպատակահարմար ենք գտնում սահմանել կարգավորում, որի համաձայն վերոնշյալ դեպքում տուժողը հնարավորություն կունենա անմիջապես դիմելու էլեկտրոնային կայքի իրավատիրոջը վիրավորական արտահայտությունները կամ զրպարտչական տեղեկատվությունը հեռացնելու պահանջով:

Чифликян Арменуи,
Аспирант кафедры гражданского права ЕГУ

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ОТНОШЕНИЙ ВОЗНИКАЮЩИХ В СВЯЗИ С УМАЛЕНИЕМ ЧЕСТИ, ДОСТОИНСТВА И ДЕЛОВОЙ РЕПУТАЦИИ ЛИЦА ПОСРЕДСТВОМ ГЛОБАЛЬНОЙ СЕТИ

Данная работа посвещена правовому регулированию отношений возникающих в связи с умалением чести, достоинства и деловой репутации лица посредством глобальной сети.

Были подняты такие вопросы, как

1) Может ли умаление чести, достоинства и деловой репутации привести к ответственности в случае его любого совершения посредством интернета?

2) Каким особенным способом может проявлятся умаление репутации лица посредством интернета?

3) Достаточны ли средства защиты предусмотренные законодательством Республики Армении для того, чтобы эффективно защищать свои права при умалении чести, достоинства и деловой репутации посредством глобальной сети?

В результате многостороннего изучения этой сферы сделана попытка найти решения для регулирования спорных вопросов, и в соответсвии с этим пресдставлены предложения направленные на усовершенствование законодательства Республики Армении в данной сфере.

Chiflikyan Armenuhi
PHD Student of the YSU Chair of Civil Law

LEGAL REGULATION OF RELATIONS OCCURING IN CONNECTION WITH DEROGATION OF A PERSON'S HONOR, DIGNITY AND BUSINESS REPUTATION THROUGH THE WEB

This work is devoted to the legal regulation of relations occuring in connection with derogation of a person's honor, dignity and business reputation through the web.

There have been raised such issues as

1) May the derogation of honor, dignity and business reputation entail liability in case of its any commitment through the internet?

2) In what specific manner can appear derogation of person's reputation via internet?

3) Are the means of protection stipulated by the legislation of the Republic of Armenia sufficient for person's rights effective protection in the case of derogation of honor, dignity and business reputation via web?

As a result of comprehensive examination of this sphere an attempt to find solutions for regulation of disputable issues is made and pursuant to it suggestions seeking to the improvement of the legislation of the Republic of Armenia in the present sphere are produced.

Բալալի բառեր՝ *համացանց, էլեկտրոնային կայք, մեկնաբանություններ, պատիվ, արժանապատվություն, գործարար համբավ, նսեմացում, վիրավորանք, զրպարտություն, ինքնության յուրացում:*

Ключевые слова *глобальная сеть, вебсайт, комментарии, честь, достоинство, деловая репутация, умаление, оскорбление, клевета, присвоение идентичности*

Key words: *web, website, comments, honor, dignity, business reputation, derogation, insult, slander, impersonation.*